

| Ազգային Հիփոթեքային Ընկերություն / ԱՀԸ / ՈԻՎԿ ՓԲԸ - ի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակներում անշարժ գույքի կառուցապատման համար տրամադրվող վարկ | | |
|---|--|--|
| Սպասակային նշանակություն | Բնակելի անշարժ գույքի կառուցապատում | |
| Հնարավոր վարկառուներ և համավարկառուներ | Կայուն եկամուտ ունեցող ՀՀ քաղաքացի և ռեզիդենտ ֆիզիկական անձ: | |
| Վարկի նվազագույն և առավելագույն գումարը | A + | |
| | (ք. Երևան և հարակից տարածքներ /30 կմ հեռ ./) 5,000,000 - 25,000,000 ՀՀ դրամ (փուլային , առնվազն երկու փուլ, վերջին փուլի գումարը պետք է կազմի ընդհանուր գումարի 20%) | |
| Վարկի արժույթ | ՀՀ դրամ | |
| Վարկի նվազագույն և առավելագույն ժամկետը | A+ 120 - 180 ամիս | |
| Տարեկան անվանական տոկոսադրույք | 11.5% | |
| Տարեկան փաստացի տոկոսադրույք | 12.63 %- 13.4% | |
| <p>Ուշադրություն՝ վարկի տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում եւ չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել այստեղ: Վարկային պայմանագրի գործողության ընթացքում Բանկի կողմից անվանական տոկոսադրույքի փոփոխություն չի նախատեսվում, եթե վարկառուն չի խախտում պայմանագրով սահմանված պայմանները:</p> <p>Ուշադրություն՝ Այս վարկի անվանական տոկոսադրույքը կարող է փոփոխվել բանկի կողմից վարկային պայմանագրի գործողության ընթացքում, եթե վարկառուն խախտի պայմանագրով սահմանված պայմանները:</p> <p>Փոփոխման սահմանաչափերն են՝ 1-5%</p> | | |
| Պարտադիր վճարման ենթակա վճարներ | Միջնորդավճար՝ 85000 ՀՀ դրամ (այդ թվում՝ վարկի տրամադրման համար՝ 80,000 ՀՀ դրամ: Վարկային հայտի ուսումնասիրման համար՝ 5 000 ՀՀ դրամ:) | |
| Վարկի տրամադրման կարգը | Վարկը տրամադրվում է կանխիկ և անկանխիկ եղանակով: | |
| Վարկի մարման կարգը | Ամենամսյա անուիտետային մարումներ: | |
| Վաղաժամկետ մարման հնարավորությունը | Թույլատրվում է առանց սահմանափակումների | |
| Տույժեր | Ժամկետանց վարկ | Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով |
| | Ժամկետանց տոկոս | Յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով |

Ձգուշացում Ձեր գույքը կարող է օրենքով սահմանված կարգով բռնագանձվել, եթե դուք ժամանակին չկատարեք Ձեր տոկոսագումարների և վարկի գումարների մարումները:

Ուշադրություն՝ Ձեր կողմից պարտավորությունը չկատարելու կամ թերի կատարելու դեպքում վարկատուն այդ տվյալները ուղարկում է վարկային բյուրո, որտեղ ձևավորվում է Ձեր վարկային պատմությունը: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ձեռք բերել Ձեր վարկային պատմությունը: Վատ վարակային պատմությունը կարող է խոչընդոտել ձեզ՝ ապագայում վարկ ստանալու համար:

Վարկային պարտավորությունների չկատարման եւ գրավի հաշվին պարտավորությունները մարելու դեպքում, վարկառուի վարկային պարտավորությունները ծածկելու համար գրավը բավարար չլինելու պարագայում, հնարավոր է պատավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:

| | | |
|-------------------------|------------------------------|---|
| Ապահովվածություն | Գրավ | Հողատարածքը, որի վրա կառուցվում է բանկեյի տունը (յուրաքանչյուր փուլում գրավի վերագնահատմամբ): Եթե գրավի շուկայական արժեքը չի ապահովում վարկ/գրավ արժեքը անհրաժեշտ է լրացուցիչ գրավ: |
| | Երրորդ անձի երաշխավորություն | Չի հանդիսանում պարտադիր Նպատակահարմարությունը որոշվում է հայտի հաստատման ընթացքում |

Գույքը գնահատվում և ապահովագրվում է Բանկի հետ համագործակցող ընկերություններից որևէ մեկի կողմից [/ցանկը տես այստեղ/](#):

Օժանդակ ծառայություններից օգտվելու գնային միջակայքը հետևյալն է՝

- գույքի գնահատում՝ 15.000 ՀՀ դրամ
- գույքի ապահովագրություն՝ 0.22% գնահատված արժեքից կամ վարկի գումարից (հաճախորդի ցանկությամբ)
- անձնական ապահովագրություն՝ 0.17% վարկի գումարից
- նոտարական ծառայությունների վճար՝ 15 000- 20 000, ներառյալ ամուսնության վերաբերյալ հայտարարությունների համաձայնագրերը
- գույքի պետական գրանցման վճար՝ 26 400- 172 500 ՀՀ դրամ

| | | |
|-----------------------------------|---|----------|
| Վարկ հարաբերած գրավի արժեք | առավելագույնը 70% | |
| Գրավի գնահատում | Պարտադիր, լիցենզավորված անկախ գնահատող կազմակերպության կողմից: Իրականացվում է վարկառուի միջոցներով: | |
| Ապահովագրություն | Գույքային, միայն շինարարության ավարտից հետո | Պարտադիր |
| | Անձնական, վարկի | Պարտադիր |

| | | |
|---|--|--|
| | գումարի չափով տրամադրման պահից | |
| Գրավին ներկայացվող պահանջներ | Հողատարածքը և լրացուցիչ գրավը պետք է գտնվեն A+ գոտում: | |
| <p>Սպառողի համար վարկի հասանելիությունը սահմանափակող այլ պայմաններ չկան: Վարկը ձևակերպվում է բանկում՝ մասնաճյուղերում:</p> <p>Վարկի տրամադրման դրական գործոններն են հաճախորդի վարկունակությունը, դրական վարկային պատմության առկայությունը, գրավի առարկայի որակը և այլն:</p> <p>Վարկի մերժման գործոններն են հաճախորդի եկամուտների անբավարար լինելը, բացասական վարկային պատմության առկայությունը, ներկայացված տեղեկատվության կամ փաստաթղթային փաթեթի թերի կամ անարժանահավատ լինելը և այլն:</p> <p>Պայմանագրի գործողության ընթացքում քաղվացքների, դրանց կրկնօրինակների, տեղեկանքների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները տես «Սակագներ» բաժնում:</p> | | |